

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ԱՇՈՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

(Պատմական գիտ. քննաժողով)

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՐԶԱԳԻՐ ՄԱՆՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պատմագիտական բովանդակություն ունեցող գրչադրերում մեզ հաճախ են պատահում մանր ժամանակագրություններ, որոնք զբաղվել են պատմական ժամանակներում տարբեր գրիչների կողմից: Այդ ժամանակագրությունները արժեքավոր նյութեր են պարունակում ոչ միայն հայ ժողովրդի, այլ և վրացի, ադրբեջանցի, մոնղոլ, սելջուկ, պարսիկ և Արևելքի այլ ժողովուրդների պատմության համար: Նրանց մեջ նյութեր են հանդիպում անգամ հեռավոր Հնդկաստանի պատմությունից: Քաղաքական գեղեցիկն ուշագրություն չեն տալիս հայ գրիչը կամ ճանապարհորդն անհրաժեշտ է համարել իր ձեռագրի չգրված էջերում ժամանակագրական կարգով արձանագրել իր ժամանակի կարևոր գեղեցիկը՝ շատ գեղքում համեմատությամբ չհիշելով իր անունը:

Այդ արժեքավոր նյութերը մինչև այժմ, դժբախտաբար, մասնագիտական հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել: Նրանցից շատ քչերն են հրատարակված: Այժմ, նրանց ի մի հավաքումը, ժամանակագրական կարգով դասավորումը, մշակումը և հրատարակումը այնքան կարևոր մի գործ է, որքան կարևոր է ձեռագրերի հիշատակարանների հրատարակությունը: Սակայն այդ աշխատանքը—

երկար ժամանակ պահանջող աշխատանք է: Մինչ այդ՝ պատմական տարբեր շրջաններում ու տարբեր թեմաներով զբաղվող մասնագետներին՝ գրչադրերում կգտնվի այդ նյութերը՝ իրենց ուսումնասիրությունների ժամանակ մատչելի դարձնելու համար, Մատենադարանն անհրաժեշտ համարեց հրատարակել ներկա համառոտ բերվող քաֆիան:

Ժամանակագրություններն այստեղ դասավորված են ըստ գրչադրերի համարի: Սակայն այդ դասավորումը պայմանական է, որովհետև գրչադրերում կգտնվի ժամանակագրությունները չէ, որ հայտնի են մեզ և, պարզ է, որ հետագա աշխատանքի ընթացքում նորից կհավաքվեն նման ժամանակագրությունների անհատականներ, որոնք և կդասավորվեն ու կարվեն համարական նոր խմբով:

Առանձին ժամանակագրությունների հրատարակությունների վրա մենք կանգ չենք առել, որովհետև մեր նպատակը չի եղել տալ նրանց տալգիր բերվող քաֆիան: Դիտենք, օրինակ, որ Հովհաննես Դրասխանազյանը, Մովսես Երզնկացու, Մարտիրոս Դրիմեցու և ուրիշների ժամանակագրությունները հրատարակվել են:

Ա. Ա.

№ 82 [է 4] ժամանակագրության բնօրինակը պատմության:

Հեղինակը նախի վրա. թուրքերին է. Այդ երկուսն է ժամանակագրության հետևող պարբերությունից. «Ի թուրք հայոց 1209, յունիսի 2 օրն, ցարեկեան 2 սհաթ և կէսին արեգակն խաւարեցաւ աշնքան, մինչ եղև զիշեր... և եկաց կէս ժամի. և ապա եցայց զայսն սակաւ առ սակաւ. էի յայնժամ նախի վարդապետս (ընդգծումը մերն է.—Ա. Ա.) Ի թուրք» [էջ 487]:

Ժամանակագրությունը վերնագրված է. «Արդ պատհ է գիտի ուրեմն քե որքան ամբանցեալք են ի սեղծմանն աշխարհի և ի ժամանակս նախնեաց և զքիս ստեղծեցաւ...»:

Ժամանակագրությունը սկսվում է Ադամից՝ մեջ ընդ մեջ հիշելով հայ տոհմաբաններին և թագավորներին ու նրանց գործունեությունը:

Հնագույն շրջանի ժամանակագրությունը նա հասցնում է մինչև «ստեղծագործութեան» 3925 թվականը. («Հիբրոդէս աշխարհի եղև առաջին թագաւոր հրէից ամին 3925») ու սկսում մեր թվագրությունից՝ «402—Հոսմ առաւ ի Գոթայեոց: 402. Ֆէսոսմոնդոս եղև առաջին թագաւոր Գալլիայեոց: 421. եղև զկիսն շինուածօյն Վինէտիկոյ» [էջ 481]:

Ժամանակագիրը կանգ է առել նաև առանձին կատարելագործությունների վրա, այսպես՝ «Յօհաննէս Կօրէնպէրն եզիտ զապի գրութիւնն ի Մանկոնցայ». [էջ 481]: «1582. գտին զարհեստ թօի և թփանկի. այս գործ նախ քան զամենայն յառաջ Վինտիկցիք ի կիր առին ընդգէմ Ջէնուիպացոց» [էջ 482], «Գտեալ եղև նոր աշխարհ՝ որ է յԱրևմտական Հաստան ի Բրիտանիոյն Կօլումպէ Ջենուապոլս 1583 թ.: Եւ այլք ասին թէ՛ ի թուին Բրիտանի 1497 թ. Ամերիկոս Վէսպուչինոսն եզիտ զնոր աշխարհն Հնդկաց...» [էջ 482]: Ժամանակագիրը որոշ տեղերում կանգ է առել իր կարծիքով արտահայտելու կարեւորություն ունեցող փաստերի վրա:

«1498. Ի Մեկան, և ի նոյն ժամանակի ծնաւ կին մի ի յԱրամանս զորդի, զոր ունէր երկու գլուխս, զչորս ձեռս և զվեց աւանջս: Եւ կին մի եղև ընդ առն իւրում զամս 10 և յետոյ փոխեցաւ ի բնութիւնէ կանայի և եղև այլ ամենայն անդամօք» [էջ 483]:

«1566... Եւ ի նոյնում ամի ի երկիրն Ինկիլիպայ յառն մի մեծ վերացաւ ի տեղւոյն իւրմէ և եկաց յայլում տեղի» [էջ 483]:

«536 ? (հավանական է 1536) Իտալիա եղև սով մեծ՝ մինչ զի մարդիք զմիմիանս ուտէին. և ծնողքն՝ զգաւալս» [էջ 483]:

532 ? (հավանական է 1532) Ի Միլան եղև սով միծ, մինչ զի կանայք զորդիս իւրեանց կերան» [էջ 485]:

«1408 թուին եղև աշնայիսի անձրև Իտալիայ, մինչ զի 400,000 մարդիկք ջրասուզեալք մեռան և բազում զիւղորայք քակեալք աւերեցան» [էջ 483]:

«1515 Սուլթան Սէլիմն ձերբկալ արար զՄարա սուլթանն. և էառ զամենայն թագաւորութիւն նորս» [էջ 483]:

«1541 Հինգերորդ Կարլս թագաւորն մեծաւ գորութեամբ գնաց ի վերայ ջաղայիւրին՝ զմեծ նաւակածութեանս 70 նաւք ընկզմեցան և դարձաւ յիսս» [էջ 483]:

Ժամանակագրությունը վերջանում է 1209 [=1760 թվի], հունիսի 2 արեգակի խավարումով՝ (տես էջ 498):

Ձեռագիրն ընդօրինակված է 1770 թ.:

№ 84 (կ. 53) ժամանակագրական փոքրիկ ցանկ՝ մի բանի հայ մասնագրերի մասվան: Վերնագրված է. «Վարդապետաց [վախման]իլն»:

Սկսում է Ներսես վարդապետի ժանվանից. «Հանգաւ... Ներսէս վարդապետն ի վանս Գրաձորոյ թվ. հայոց ՉԼԳ (=1284):

... Յովհաննէս Որստնեցին՝ ՊՀԵ (=1426):

... Զարարիա կաթողիկոսը ... թվ ՊԽԵ (=1396): Ընդամենը կես էջ է՝ տեղափոխված թերթ 1ա-ում:

Ընդօրինակված է 1284—1396 թ. միջև ընկած ժամանակաշրջանում:

№ 227 (կ 538) ժամանակագրություն Հայ կաթողիկոսների:

Վերնագրված է. «Կաթողիկոսք Հայոց և ամբ և քիւք նոցա»:

Սկսում է Լուսավորչից. «Ա... Լուսաւորիչ ամս Լ ... » (թերթ 69 ք): Հաջորդական հետեւողականութեամբ շարադրելով կաթողիկոսների ժամանակագրութեանը՝ հասցնում է մինչև Գրիգոր Անավարդեցին (1297 թ.) «ՀԱ. Ստեփաննոս Հոսովկայեցին... և այժմ է աէք Գրիգոր Անավարդա եպիսկոպոսն ...»: Ուրիշ մեկը շարունակել է կաթողիկոսների այդ շարքը՝ հասցնելով մինչև Միքայիլ Սերաստացին [1545—1567]:

Ձեռագիրն ընդօրինակված է 17-րդ դարում:

№ 462 (կ 441) ժամանակագրություն այն հայ հեղինակների, որոնք գրել կամ մեկնել են առանձին աշխատություններ:

Վերնագրված է. «Վասն մեկնչաց ասուածային գրոց ի մերոց վարդապետացն՝ քի ով աք և արտեալ»:

Սկս. թերթ 217 ա «Անանիա վարդապետն ի Սանահին վանացն՝ այք հանճարեղ գիտող սոմարական արհեստին, էք ի ժամանակա Պետրոս կաթողիկոսին և հրամանաւ նորա ի մի հաւաքեալ դրանս եփրեմի և Յովհաննոս Ոսկերերանին և Կիւրղի և այլ սրբոց...»:

Ժամանակագրութեանը տրված է ընդհանուր ձևով՝ առանց հիշելու առանձին հեղինակների կոնկրետ ժամանակը: Հիշված է միայն մի քանի հեղինակների անունները:

Ընդօրինակված է 18-րդ դարում:

№ 481 (կ 484) ժամանակագրություն Օսմանյան պատերազմի (1232—1621 թ. թ.):

Վերնագրված է. «Ասման օղլու կարգն այս է որ կոչին խանգար»:

Սկ. թերթ 67 ք՝ «Ռաման Օղլու կարգն ու սկիզբն որ ելեալ են և բազմացեալ բազում քաղաքաց և դաւառաց տիրեալ և թաղաւորեալ հայոց թվիս. ՈԶՍ. (1132 թ.):

Սկսելով Օսման 8-ից հաջորդականութեամբ թվում է տասնիկ սուլթաններին

(Աւրխան սուլթան, Մահմադ սուլթան և այլն): Այնուհետև տրված է համառոտ ձևով որոշ սուլթանների աչքի ընկնող գործունեութեանը, այսպես՝ «Սուլթան Սէլիմն թագաւորեաց. բազում զօրօք գնաց ի վերայ շահ Իսմայէլին: Եւ պատերազմեցաւ ի Չալարան. և ոչ կարաց առնել զնա: Դարձաւ յետ և էառ զԿամախ. ՉԿԴ. թվին: ՉԿԵ. թուին էառ զԱմիրթ... ՉՉԴ. թվին սուլթան Սիւմանն բազում զօրօք ել և գնաց ի վերայ շահ Դահմադին ի Թաւրէզ. և ոչ կարաց յաղթել զնա. դարձաւ էառ զԲարեւոն՝ որ է Պաղատա» (թ. 61 ք):

Հիշվում է սուլթան Մուրադի՝ Անդրկովկասի և Պարսկաստանի որոշ շրջանները նվաճելու փառքը. «Եւ այս թագաւորս սուլթան Մուրադն առաքեաց բազում զօրս ի վերայ պարսից աշխարհին և էառ՝ զԹօրէժ, և զԵրևան, զԿանճաշ, և զԱրշադ, և զՇամախի՝ մինչև ի Դուռն Ալանաց, զոր եղեալ է Աղէքսանդր Մակեդոնացին» (թ. 68 ա):

Ժամանակագրութեանը վերջանում է սուլթան Օսմանի դեպի Լեհաստան սկսած արշավանքով. «ՌՀ. Գնաց ի վերայ լեհաց պատերազմ սուլթան Ասմանն՝ հանդերձ թաթար խանին. և դարձան բազում գիրեաւ. և սեղանայ արարին ամենայն երկիր նորա ի յայս միս մի (?) աստուած էառ զվրէժ զերեացն ի սուլթան Ասմանէն՝ յարեալ զօրքն ի վերայ և սպանին. և թաղաւորցուցին զսուլթան Մուստաֆան, զօրեղբայր նորին՝ հանեալ ի յարգելանոցէն» (թ. 68 ք):

Ձեռագիրն ընդօրինակված է 1621 թ.:

№ 482 (կ. 476) ժամանակագրություն հայոց Բագրատունյաց և Ռուբենյան իշխանների և քաղաւորների և հետագա շրջանի (կասցված է մինչև 1297 թ.):

Վերնագրված է. «Յաղագս ժամանակի իշխանաց և քաղաւորացն՝ որք ի Սիս. տիրեցին»:

Սկ. թերթ 13 ք. «Նախ և առաջին Ռուբեն եղբայր Դադկայ իշխանին, ի ցեղէն Արշակունեաց, էառ զԿիլիկիայ ի թուին հայոց ՆՂԴ»:

Երեսի երեք քառորդի չափով՝ տալով Ռուբինյանների ժամանակագրությունը, ժամանակագիրն անցնում է Ջաքարյաններին. «Ոկտ. Ջաքարիայ սպասարարն էառ զԱնի և տիրեաց նմայն»:

Այնուհետև գառնում է գեղի Բագրատունի թագավորների ժամանակը և նորից անցնում վրացական տիրապետության շրջանին: Վերջացնում է 1297 թվականով. «Ի թվին. Ջիպ. էր՝ աշխարհակալ Ղազանն...»:

Ջեապիրն ընդօրինակված է 1711 թվին Կոնիստան սարկավագի կողմից:

№ 482 (է. 485) Տարեգրությունը բնդհանուր պատմության:

Վերնագրված է. «Մասնառոտ ժամանակագրություն և գաղաղմագիրք սկսեալ ի բուականութեան ժարմատիկ անօրէնութեան տեսարն մերոյ Յիսուսի Քրիստոսի հաղաւորողին, ինն յորելի և երեք թուովք աւելի (=1456): Իսկ արամեանս ասմարի ետից երբակ հարիւրի (=3×300+551=1451 թ.). և անդուստ հաւաքեալ և վիպարանեալ մինչև նարդեանս ամանակի, որում գիրս գրեցի...»:

Տարեգրությունը շարադրում է Անկուհեակողականությամբ, երեք աղյուսակներում, որոնցից առաջնում տրված է մեր ներկա գործածական թվականը, երկրորդը—հայ կաթողիկոսների ժամանակը, իսկ երրորդը—հայոց թվականը: Համապատասխան թվականի առջև աջ ու ձախ կողմերում շարադրվում են պատմական փաստերը:

Տարեգրությունը սկսում է Ջհանշահի նվաճումների հիշատակությունից. «ԻՆԾԶ. Ճհանշէն, որդի Ղարայ Ուսուֆին, գնացեալ էառ՝ զՀամատան, զՍաւայ, զԱսպահան, զՌէ, զՂազվին, զԳիլան, զՔանան, զՇիրազ, զՔրման, զՍորատան, և զքաղաքս անթիւս քաղաքս» (թերթ 44ա):

Տարեգրության մեջ հիշված է մի շարք խանների, սուլթանների ժամանակը, նրանց գործունեությունը, արեղակի խաղաղութիւնը, երկրաշարժեր և այլն:

Տարեգրությունը վերջանում է Թարվիզի նվաճումով և Արքանաթ Թաքիբգաղցու կաթողիկոս ձեռնադրումով. «ԹՃԼԹ կրկին յեառին պարսիկք զքաղաքն Թարեզ, ԹՃԶԳ. օծաւ կաթողիկոս երկրորդ Արքանաթ վարդապեան Թաքրտաղցի»:

№ 503 (է. 533) Համառոտ ժամանակագրություն հայոց պատմության Մովսեսի երգնկացու:

Վերնագրված է. «Վասն քաղաւորաց հայոց, զոր կարգեաց Մովսէս Խորենացին»: Խորենացու պատմությունից վերցրած ու համառոտած հայ թագավորների ժամանակագրությունն է: Սկսվում է սովորականի նման՝ «Մովսէս Խորենացի զշարս թագաւորացն հայոց աշապէս դատէ...» (թերթ 161):

Ընդօրինակված է 160 թ. Պոլսում Ավետիս կաթ. ի կողմից:

№ 576 (է. 535) Համառոտ ժամանակագրություն հայոց պատմության Մովսէս երգնկացու:

Վերնագրված է. «Վասն քաղաւորացն հայոց, զոր կարգեաց Մովսէս Խորենացին»: Սկսում է «Նաւս քաղաւորացն հայոց աշապէ կարգի»:

Յարեթ, որդի Նոյի.

Դամեր:

Թիրատ...» (թերթ 158ա):

Վերջանում է. «... ապա Հեթում յազգէ նորա. և յեա նորա որդի նորայ Լեոն. և էին որդիք է (=Լօթն), որ ընդ միմեանս մարտուցեալք. և մնաց միայն Օշինն, որ այժմ ունի զթագաւորութիւնն» [թերթ 161ա]:

Ջեապիրն ընդօրինակել է Պետրոս քահանան երգնկայում:

№ 579 (է. 540) ժամանակագրություն հայ կաթողիկոսների՝ կազմված Հովհաննէս Դաւթաբանակեցու կողմից:

Վերնագրված է. «Յովհաննէս կաթողիկոսի»: Սկսվում է թերթ 74 բում «Յեառաքելոցն սրբոյ Բարթողիմէոսի և Թագէոսի, որք վիճակեցան ի տեսանէ քարոզք

և աւետարանիչք Աղքանազեան գրոհի և վարդապետք Բրիստոսի աստուածաշնորհութեանն...»:

Ժամանակագրությունն ընդհատվում է եղիայի կաթողիկոսության թվահամարի վերջում «ի ՃԾԲ. ի թուականութեանն կացեալ սորա ի յաթոռ հայրապետութեանն» (թերթ 76 բ):

Շարունակվում է թերթ 197 բ-ում «Տէր Յովհաննէս ի Տաշրայ, ի գեղջէ Աւձունոյ...»: Ժամանակագրությունը վերջանում է իրեն, Դրասխանակերտցու կաթողիկոսությամբ՝ «Հուսկ [յետոյ հ]էկս ես և թշուառականս (սս)»-ն գրված է վերեվում) Յովհաննէս, հայրենաւք ի մեծ դաստակերտէն Դրասխանակերտէ: Ընդալտ զսոյն աշտինան ՅԽԲ թուականին...»:

Ժամանակագրությունն ընդօրինակող գրիչը, ներսեւը, ինչպես երևում է, ընդօրինակման ժամանակ իր ձեռքի տակ ունեցել է այսպիսի մի ձեռագիր, որի թերթերը խառնված են եղել, այլապես ժամանակագրությունը թերթ 197 բ-ում ընդօրինակվել չեր կարող:

Ձեռագիրն ընդօրինակված է 1276 թ.:

№ 582 (Կ. 530) Ժամանակագրություն մանդալ խաֆերի (1263—1311 թ. թ.):

Վերնագրված է. «Կառգ էլխաների»: Սկս. թերթ է 152 բ՝ «ՈՂԸ. Հուլաուն: ՉԺԲ. Արադան: ՉԼԱ. Ահմատն: ՉԼԱ. Արդուն: ՉԽ. Բաղաթան: ՉԽԱ. Բայտողան: ՉԽԳ. Ղազան: ՉԽԶ. Մահմատն: ՉԿԵ. Բուսախան: ՊՂ՝ Թուխթամիշ դան Ղախմին»: Տալիս է այնուհետև հետաքրքիր տեղեկություններ խաֆերի գործունեության մասին, այսպես՝ Թուխթամիշն «առաքեաց զօրս ի Դաւրէժ և ի Բիւր գերի տարաւ», «ՊԼն. Թամուր եկաւ ի Դաւրէժ և ի Նախչվան և կոտորեաց աւելի քան ԴՌ մարդ»: Նույն Թամուրը «ՊԽԹ. զարձեալ եկաւ ի վերայ վրացիին և էառ գերի և գնաց յաշխարհն իւր և ստակեցաւ» և այլն: Ժամանակագրությունը վերջանում է ՉԿ (=1311) թվականով՝ «Գնաց Հեթում ի դան Ղազան. ել հրամ[ան] ի դանէն՝ աւերել զեկեղեցիս: Մեռաւ հեթում ՉԿ» (=1311):

Ժամանակագրության հեղինակը հայանի է: Հավանական է, սակայն, կիրակոս բանասերի աշակերտներից մեկը լինի, որովհետև ժամանակագրության վերջում նույն գրչությամբ կա այսպիսի մի հիշատակագրություն. «Բ՝ս ա՛ծ ողորմեաց կիրակոս Բանասէրին...» (154 բ):

Ձեռագիրն ընդօրինակված է 15-րդ դ.:

№ 605 (է 586) Ժամանակագրություն հայոց քաղաքների և հոռմեա-քյուզանդական կայսրների: [Աղամից մինչև Փալաս կայսեր ժամանակ]:

Վերնագրված է. «Յնունդք Աղամայ քիւք նոցին»: Սկ. թ. 217ա՝ Աղամ եկաց ՄԼ ամ և ծնաւ զՍէթ. Սէթ ամս ՄԵ միաւորեաւ և լինի ՆԼԵ...»:

Թ. 219ա «Թաղաւորք հայոց ի Նոյէ...»

Յարեթ: Գամեր: Թիրաս...»:

Թ. 220ա «Հոռումսց քաղաւորք:

Գայիս. Յուլիսոս: Առաջին Թաղաւորք հոռումաց կալաւ ամս Ե...»

Վերջ. թերթ, 221 բ՝ «Յուստանոս ԼԹ, Տիրեր՝ Ե. Մաւրիկ՝ Ի. Փովկա՝ Ը. Մինչև ի գալն յՈրմըղդան արքայից արքայի»:

Ձեռագրի գրչությունը 17-րդ դարի է: Գրիչը—կիրակոս արեղան է:

№ 605 (է 586) Անխորագիր ժամանակագրություն (1018—1070 թ. թ.):

Սկ. թ. 20ա՝ «Ի թվին հայոց. նկէ. զարթաւ աստուածատաստ բարկութիւնն և ելին ազնի թուրքաց ի վերայ քրիստոնէից ի Վասպուրական...»:

Վջ. թ. 21 բ. «... ՌՃԺԹ ին. Շահ Սուլէյման Թաղաւորեաց: Երկնայ շարժըն ԻԸ (? համանական է ՌՃԻԸ) թուին»:

Մինչև ՌԽԳ թվականի գեղքերը նմանվում է № 3078 գրչագրի ժամանակագրությանը: Վերջում, ՌԾԲ (=1603) թվականից մինչև ՌՃԺԹ (=1670) թվականի ժամանակագրությունն, ավելացվել է այլ թանաքով, ուշ շրջանում, այլ գրչի կողմից:

Ձեռագրի գրչությունը 17-րդ դարի է: Գրիչը—կիրակոս արեղան է:

№ 678 (է. 792) Համառոտ ժամանակագրությունը բնագիտական պատմության [1013—1604 թ. թ.]

Վերնագրված է. «Այս են քվակառն տանկաց և այլագրացն»:

Սկ. թ. 177 թ. «Ի թվին հայոց Նկն. դարդեալ աստուածաստութեան ըստկութիւն ի վերայ Բրիտանիայի...»:

Վերջ. թ. 178 թ. «... թվին Ռեթ. մեռաւ Մուրատն. նստաւ սրդին սուլթան Մահմատն. թվին Ռեթ. մեռաւ Մահմատն. նստաւ սրդին սուլթան Ահմատն»:

Ձեռագիրն ընդօրինակել է Սուքիաս Դափանցին 1673 թ. Հառիճ վանքում (Ղափչաղ): Նմանվում է № 3078 գրչագրի ժամանակագրությանը:

№ 713 (610) ժամանակագրություն Անդրկովկասի պատմության. Անխորագիր: (1660—1705 թ. թ.):

Թ. 137 թ. «Թիւն. ՌՃԹ. էր, որ Թամբաղ խանն՝ շահն գնաց: Թիւն ՌՃԷ էր, որ յԵսուստամ խանն մեռաւ Վրաց տուն...»:

Վերջ. թ. 138 ա «... Թիւն ՌՃՄԹ էր, մարտի ամսոյ ժն, օրն հինիշարթի, Գ. սհաթն, Քեաղպալահ խանն Գանճու դուրս եկաւ առ Թաղաւոր գնաց փախուղ Աստուատապատած սարդար թուրքման Ատինայ վերայ. վերջն աստուած գիտէ (Ղուրդին)»:

Ընդամենը երկու էջ է: Փաստերը հետաքրքիր են: Թերթ 138 թ ալլ գրչով ավելացրած է ժամանակագրական երկու փոքրիկ տեղեկություններ. «Թիւն ՌՃԾԵ, նաւասարդի ուրբաթ օրն, Վալի խանի աղայ Իմում դուլի խանն ի գնաց Թօփդարաղան. վերջն ալստուածոյ է գիտելի»:

Թիւն ՌՃԾԵ. էր, որ Միրզա Դասուհի գնաց ի Զահամ դոշուն դուրս անիլ. սուրբ աստուածածնի կիրակի օրն ես Մեյիք Բեամս եկի, որ բանին սուրաթ տվի»:

Գրչությունը 18-րդ դարի է:

№ 737 [է. 639] Ռտմավոր ժամանակագրություն հայոց պատմության Մարտիրոս Դրիմեցու:

Վերնագրված է. «Կարգ ու քիւ քաղաւորաց հայոց՝ ոգեալ ի Մարտիրոսէ վարդապետէ»:

Ժամանակագրությունը տրադիցիոն ձևով սկսվում է Նոյից, Հաբեթեց և Հայկից՝

«Ազգըս հայոց դատ առանձին,
է ըստուգիւ յԱբեթածին,
Որդւոյ Նոյի նահապետին,
յորմէ Գոմերն է մեր նախնին» (Թերթ 197 ա)

Լեզենդար շրջանի հայկական նահապետները նկարագրելուց հետո նա անցնում է Արտաշեսյան շրջանի նկարագրությանը — Տիգրան 2-րդի շրջանը նա ներկայացնում է հետևյալ ձևով.

«Ապա Տիգրան սորա (այսինքն Արտաշեսի—Ա. Ա.) որդին.

Զայն որ կոչին Տիգրան միջին,
սա արշաւէ ի Պաղեստին,
յաղթահարէ գձոճմայեցին:
Որպէս հընոյն Իսրայէլին
դատաւորաց ժամանակին:
Յետ այսորիկ միաբանին.
իշխանադունք հայոց ազգին.
և սահմին մարդպանութիւն.
Վարդըն պարոն նըստի նախկին»:

Անցնելով արարական շրջանին, գրում է՝

«Վարդան պատրիկ դաւօղն յունին.
պարոն Դաւիթն յազգէ նորին.
Թէոդորոս ոմն յետ Դաւթին.
և Համադասաղն որ ի կարգին»:

Այստի որդի Սմբատից հետո՝

«Սնտիրանան դարձեալ կրկին,
յիսուն և չորս ամ վերստին.
անբախտ յաջորդ հօրըն գահին.
խակ Արտավազդ որդի սորին.
որ ծառաէր որովայնին.
և նախատինք իւրոյ յազգին»:

Անակի՝ Յոսրովու սպանությունից հետո, նա գնում է անիշխանության շրջան մինչև Տրդատը՝

«Եւ անհնօր հայք անաիրին.
կոխան ազգից պարսից լինին.
Մինչ ի դալուսան որդոյ նորին,
Տըրդատ անուն հաղթող կայսրին»:

Անցնելով Մարդպանության շրջանին,

նա շարունակում է նոր վերնագրի տակ «Ի
զբաւ Արշակունեաց, նստին իշխանք», և
սկսում՝

«Երեք տասան ամ անտիրին.
յայլասեռից իշխեալ լինին.
կոխան աղգաց բաղմաց լինին.
հազարացւոց, պարսից և յունին»:

Յետ այսորիկ դարձեալ վերըստին.
թագաւորաց մերոց լինին.
նախաժառանգ յայնքմ դահին.
Աշոտ աղգաւ Բագրատունին:

Արքունական տեղ պատրաստին.
ի բուն հայոց բաժնի մասին.
Շիրակի վանայ մեծի դաշտին.
քաղաքն ունի յեզրը գետին:

Բագրատունեայ վերջին թագաւորի, Գա-
գիկի սպանութեան մասին, ժամանակագիրը
գրում է.

«Սա մեռանի կրօնծաղին.
ձեռամբ զըժնեա յունաց աղգին.
Մինչև այս վայր տեալ մնացին.
Բագրատունեաց աղգն որ ասին»:

Բագրատունիներին նա սերում է հրեաներից՝

«Յաղգէն հրէից գոլին սոցին.
Պատմէ Մովսէս Թորենացին.
քան զի Տիգրան արքայն միջին.
որդի քաջին Արտաշէսին»:

Սա արշաւէ ի Պաղեստին.
Գերէ զքաղուծս ի հրէից աղգին.
Բագրատունիք անտի սերին.
Թագաւորաց մեր յարին»:

Որպես ապացույց նա հիշում է՝

Ուստի նշանք յայտնի ցեղին.
որ զկերպս անուանցն ոչ փոխցին.
զՇամբաւն՝ Սըմբատ անուանիցին՝.
զԱսուան՝ Աշոտ յարմար ձայնին:

Բագրատունիների նկարագրութեանը
վերջացնելով, նա անցնում է Ռուբինյան-
ների շրջանին՝

«Պարոն Ռուբէն դարմէ Գագկին.
զիշխանութիւն պահէ աղգին.
չուեալ յԱնուոյ տարագնային.
դայ ի յաշխարհ Կիլիկիին»:

Տիրէ տեղւոյն իշխանային.
դոյնս հալածէ ի տույժ Գագկին.
կըրկին տասնեակ ամք զըրաւին.
փոխի աստեացն քաջ և արին»:

Այնուհետև նկարագրվում է Կիլիկյան
բոլոր թագաւորները մինչև Լևոնը, որին նա
«Ողորմելի» մականուն է տալիս՝

«Յետ Կոստանդնա որ հուսկ հետին.
Լէօն արքայ Ողորմելին.
տիրեալ ամիսըս տասն և մին.
կորոյս ըզթաղն ընդ աթոռին»:

Քանզի սուլթանն Եգիպտոսին.
եկեալ գերեաց դամենեօսին.
զպարոնն և զիւրսն ի միասին
և զթագունի մօրու նոցին»:

Ժամանակագիրութեանը վերջացնում է
1374 թվականով՝

«Ի յութ հարիւր հայոց թըվին.
քըսան և երեք աւելորդին.
յաղգին զըժնեայ հազարծին.
բաժակըս դայս արբին»:

Եւ տասանօր բանքըս վերջին.
պատմարանելքըս զըրաւին.
Արքայք և պեաք մեր ըսպառին.
իշխանքադունք մերոյ բաւնին»:

Ամենից վերջում հիշատակում է իր գրե-
լու ժամանակը.

«Յինէն ընծայ այս քեզ եզրայր.
Մերոյ նախնեացըս վէպ և ճառ.
Մարտիրոսէ յողնաթըշուառ.
շրջաբերեալ թիւս է ծիծառ* (թերթ
199 ք):

№ 1151 (է 1138) ժամանակագրություն հայ
կաթողիկոսների՝ (Լուսավորչից մինչև
Մխիթար Գոնեքիցը):

Վերնագրված է. «Շարադրություն հայ-
րապետացն հայոց»:

Սկս. թերթ. 232 ք՝ «Արդ ի համարձ-
մանն տեառն մերոյ յերկինս. ար. Դրիգոր...»
Վերջանում է թերթ 237 ք՝ «Տէր Մխի-

* «Ծիծառ» թվականը հաշվարկ է Ծ (50) + Ի
(20) + Ծ (50) + Ա (1) + Ռ (1000) + 551 = 1672 ք:

Թար ի Գաներուն եպիսկոպոս՝ հասաւ յաթոս հայրապետութեան փոխանորդ նորա»։

Ձեռագիրն ընդօրինակել է Կոմիտաս երեց Քյոմերճոնցը Կ. Պոլսում 1693 թ.։

№ 1151 (է 1138) Համառոտ ժամանակագրութուն Փսք Ասիայի պատմութեան (1018—1594 թ. թ.)։

Վերնագրված է. «Թուականաբար պատմութիւն կարն ի կարնոյ գիտարիւն անցելոց ժամանակաց»։

Սկս. թերթ 291 ա՝ «Ի թվին Հայոց. Նկէ. դարձեալ աստուածաստ քարկուծիւնն. ելին աղզն թուրքաց ի վերայ աղզին քրիստոնէից և կոտորէին անողորմ ի Վասպուրական...»։

Բովանդակութեամբ նմանվում է № 3078 ձեռագրի ժամանակագրութեան տեքստին, սակայն վերջում ժամանակագիրն ավելի ընդարձակ կանգ է առել սուլթան Մուրադի թագավորութեան վրա՝ նկարագրելով նրա թուրքական հետևանքով սկսված միջֆեոդալական կռիվները և երկրի ծայր աստիճան քայքայվածութիւնը։

Ձեռագիրն ընդօրինակել է Կոմիտաս երեց Քյոմերճոնցը Կ. Պոլսում 1693 թ.։

№ 1511 (է 1138) Ժամանակագրութուն Գրիգոր Կամախեցու (1252—1603 թ. թ.)։

Վերնագրված է. «Թարեխ քանկաց»։

Սկս. թերթ 293 բ՝ «Ալի Օսման խան ելեր է, Կ տարի թագաւորէ. թվ. ՉԱ. Ուրախան նստիւ է, Իթ ամ թագաւորէ...»։ Վերջ. թ. 295 ա՝ «Թվ. ՌԾԲ. որ ես Գրիգոր քանի խնդրեալս, եկի յԱրարատեան յերկրէն ի յերկիրս Սախաեաց, որ այժմ Բաքերթ ասի՝ առ ոտս երջանիկ հօրն մերում, եռամեծին և տիեզերալոյս վարդապետին Սրապիւն քաջ հռետորին...»։

Ժամանակագրութեան մեջ հետաքրքիր տեղեկութիւններ է տրված հատկապես 1600 թվ. սովի վերաբերյալ «... ոմն երէց երզնկացի Ենովք անուն՝ ի գեղջէն Շողալու, պատմեաց մեղ, թե յերզնկու ելայ՝ մինչև յԱրզրում 1, մարդ մեռած տեսայ, որ ի սովոյն անկեալ էին ի վերայ հանապարհին»։

մինչ զի Ա. սոմար ցորեանն. Ը. դուռ ելաւ ու չէր վաւիր...» (թ. 294 ա)։

Ձեռագիրն ընդօրինակել է Կոմիտաս երեց Քյոմերճոնցը Կ. Պոլսում 1693 թ.։

№ 1256 (է 1291) Համառոտ ժամանակագրութուն Կիլիկյան իշխանների և քաղաւորների՝ սկսած Ռուբէն իշխանից, վերջացրած Լեւոնի որդի Հեթում թագավորով։

Վերնագրված է. «Յադագս յսկզբան քաղաւորացն Կիլիկեցւոց»։

Սկս. թերթ 194 ա՝ «Առաջին քաջ և արի իշխանն Ռուբէն ազգական էր մեծ թագաւորին հայոց Գագկայ...»։

Վերջանում է՝ թերթ 194 բ «... յես սորա (այսինքն Լեւոնի Ա. Ա.) թագաւորեաց որդին իւր Հեթում, որ զոտանաւորն շարազըրեաց դինի իւրն»։

Ձեռագիրն ընդօրինակել է Հովհաննէս Հիդանցին 1633 թ., Երուսաղեմում։

№ 1483 (է 1671) Համառոտ ժամանակագրութուն Արշակունիների և Բագրատունիաց՝ Մովսէս-Երզնկացու։

Վերնագրված է. «Վասն քաղաւորացն հայոց, զոր կարգեաց Մովսէս Խորենացին»։

Սկս. թերթ 126 ա «Մովսէս Խորենացին զշարս թագաւորացն հայոց այսպէս կարգեաց.

Յարէթ, որդի Նոյի.

Գամեր.

Թերաս...»

Վերջանում է թերթ 128 ա՝ «Կոստանդին յայլմէ աղղէ որ այժմ ունի ղթագաւորութիւն մինչև յայս վայր և ի թիւս հայոց ՊԷ միահամուռ թագաւորք հայոց ՀԱ»։

Ընդօրինակել է Մկրտիչ Զուգաչեցին Եվդոկիայում 1687 թ.։

№ 1495 (է 1779) Համառոտ ժամանակագրութուն հայոց և պարսից պատմութեան։ Համանական է կազմված է գրչի, Եփրեմ վարդապետի կողմից։

Վերնագրված է. «Կարգ թագաւորաց աղղիս հայոց և պարսից՝ թէ ուստի սերեալ թագաւորեցին»։

Սկսում է Ազեքսանդր Մակեդոնացուց. «Ազեքսանդր թագաւոր Մակեդոնացի յաղթեալ զԴարեհ արքայն պարսից. և փոխեաց առ ինքն զթագաւորութիւնն պարսից...» (թերթ 86 ր):

Ժամանակագրական հետեւողականությամբ նա թվում է Արտաշէսյան և Արշակունի թագաւորներին, Սալիֆաթի շրջանում գործող կարևոր իշխաններին: Բազրտաունյոց հայ թագաւորներին և Ռուբինյան հայ թագաւորներին և իշխաններին: Վերջում նա թվում է անիշխանության ժամանակը և վերջացնում 1679 թվով. «Իսկ ի վերջնոյ ամէ հինգերորդի Լևոնի թագաւորին Սքսոյ մինչ ցառ մեզ են ամբ. ԳճՆԳ: Եւ ի Քրիստոսէ մինչև ցառ մեզ են ամբ ՌՈՂԹ (=1679) և հայոց՝ ՌՃԻԸ» (թերթ 87ա):

Զեռագիրը գրվել է Եփրեմ վարդապետի կողմից Կ. Պոլսում, 1679 թ.:

№ 1495 (է 1779) Ժամանակագրություն Բյուզանդական կայսրների:

Վերնագրված է. «Կարգ քաղաւորացն Հռոմայ՝ որք և ի Կոստանդնուպոլիս»:

Սկսում է Կոստանդինոս Մեծից. «Կոստանդինոս Մեծն սկսաւ յամս տեառն ԳՃԻԴ (=324) ինքնակալեալ ամս Լ, ամիսս Ժ, և աւուրք ԺԱ...» (թերթ 131ա):

Ժամանակագրության մեջ հաջորդականությամբ թված են զթեթեքոր կայսրները մինչև Հովհաննէս պալեոլոգը և նրա կորայր Կոստանդինոսը: Վերջացնում է Պոլսի գրավումով. «Եւ եկեալ սուլթան Մուհամէտն յէտրէնու յերկու ամի իշխանութեան իւրոյ և էառ զԿոստանդնուպոլիս. և թագաւորն Կոստանդին ի ժարտին անկեալ մեռանի և անյայտ լինի, ոչ ոք զիտեղով զնա թագաւոր. և ուր անոր մահն նորա՝ անգիտելի: Եւ կօչեցին զքաղաքն Իստամբուլ մինչև ցայսօր ժամանակի: Եւ էր թուականն ինն հարիւր և յերկու ամի հայոց» (թերթ 131):

Զեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վարդապետը Կ. Պոլսում 1684 թ.:

№ 1495 (է 1779) Ժամանակագրական ցանկ արեգակի և լուսնի խափարումների:

Վերնագրված է. «Խաւարմունք արեգական և լուսնի անաղալապէս յէֆէմէրիտէս զրոցն ֆռանկաց»:

Սկսում է 1671 թ. խափարումներից «Ի թուականիս մերոյ հազար հարիւր քսանին (=1671 թ.) (քանիք ամսոցն մերս է որովք վարիմք և ոչ ֆռանկաց) խաւարումն արեգական մարտի ԻԹ, ԻԳ ժամին. ԻԹ տախիխային: Ի սոյն ամի խաւարի լուսինն՝ սեղանմբերի Ը, է ժամու, ԽԴ տախիխային...»:

Նման ձևով, ժամանակագրական կարգով, հեղինակը տալիս է երեսուն թվականների ընթացքում եղող արեգակի և լուսնի բոլոր խափարումները: Վերջացնում է 1700 թ. խափարումով. «ԻՃՆԹ: Խաւարումն լուսնի ապրիլի ԻԴ, Ի ժամուն, Ա տախիխային: Դարձեալ խաւարումն լուսնի ի սոյն ամի յօգոստոսի ԺԹ մէկ ժամն ԽԴ տախիխային. վերջացաւ զիրքն, որ ունի երեսնամեայ ժամանակ» (թերթ 131ա):

Զեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վարդապետը Կ. Պոլսում 1684 թ.:

№ 1495 (=է 1779) Ոսանավոր ժամանակագրություն հայոց պատմության Մարտիրոս Ղրիմեցու:

Վերնագրված է. «Կարգ թագաւորաց ազգիս հայոց»:

Իր բովանդակությամբ տառացի համապատասխանում է № 737 զրչադրի Մարտիրոս Ղրիմեցու ուսանավոր ժամանակագրության տեքստին, «Ըստի և ափելորդ ենք համարում նրա վրա մանրամասը կանգ առնել»:

Սկսվում է թերթ 141 ր, վերջանում 142ր:

Զեռագիրն ընդօրինակված է Եփրեմ վարդապետի կողմից, Կ. Պոլսում, 1684 թ.:

№ 1495 (է 1779) Համառոտ ժամանակագրություն Արեւիկունիների, Բագրատունյաց, Կիլիկյան իշխանների և քաղաւորների:

Վերնագրված է. «Թագաւորք Արշակունեաց»:

Սկսվում է Տրդատից. «Առաջին Տրդատ

ՅԶ ամ թագաւորեաց...» (թերթ 152 ա)
վերջանում է Կոստանդին կաթողիկոսով
«Դարձեալ ի թուականին հայոց ԶԺ և ՀԳ,
ի ժամանակի սուրտան Ալաաին իշխանին
հոռոմոց, յետ Յովհաննիսի, լինի կաթողի-
կոս Կոստանդին» (թերթ 152 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վար-
դապետը Կ. Պոլսում 1684 թ.:

№ 1495 (է 1779) ժամանակագրական ցանկ
միջնադարյան մի քանի մասնագրերի՝
կազմված Մաքսիմոս Արիմեցու կողմից:

Վերնագրված է. «Այս են կարգ վարդա-
պետաց հայոց՝ ի Արիմեցի Մաքսիմոս վար-
դապետէ գրեցեալ»:

Ցանկն սկսում է Մխիթար Գոշից. «Նախ
Մխիթարն որ ժականուն Գոշ կոչի: Նորին
աշակերտն վանական: Նորին՝ Ներսէս Եսա-
յիայ» (թերթ 172 բ):

Մասնագրերի ժամանակագրական ցան-
կը վերջանում է իրենով, ու իր աշա-
կերտով. «Յովհաննէս Շնքուշչին: Նորին
աշակերտ Աստուածատուր Մեծն սուրբ
Երուսաղեմայ: Նորին աշակերտ Մարտիրոս
Արիմեցին: պետն սրբոյ Երուսաղեմայ: Նո-
րին աշակերտ՝ Եփրեմ Երաժիշտն, պետն
Անգրիանուպոլսոյ» (թերթ 173 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վար-
դապետը 1684 թ.:

№ 1685 (է 1817) Համառոտ ժամանակա-
գրութիւն Արեւիկանիների և Բագրա-
տունյաց:

Վերնագրված է. «Վասն թագաւորաց
հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացին»:

Սկս. թերթ՝ 100 բ. «Մովսէս Խորենացի
զարս թագաւորացն հայոց այսպէս կարգէ.
Յարէթ. Գամեր. Թիրաս. Թորգոմ. Հայկն...»:

Վերջանում է թերթ՝ 102 բ «... ի թիւս
հայոց ՊԸ միահամուռք թագաւորք հայոց
ՀԱ»:

Ընդօրինակված է 1649 թ. Թորոս գրչի
կողմից:

№ 1723 (է 1710) Համառոտ ժամանակա-
գրութիւն հայ կաթողիկոսների:

Վերնագրված է Կարգ և թիւք կաթո-
ղիկոսաց և ամք նոցա»:

Սկս. թերթ. 131 բ. «Իս

ա	Գրիգոր Լուսաւորիչ	1.
բ	Արիստակէս . ամս	է
գ	Վրթանէս . ամս	ԺԵ
դ	Յուսիկ . ամս	Զ
ե	Փառնեքսէն . ամս	Դ...»:

Տրված է Առաքել Դավթիժեցու հետևո-
ղականութեամբ՝ հասցնելով մինչև 1733 թ.
Արքանաւ Կրեաացու ժաշը «Տէր Արքանաւ
Աղձնեաց ի Քեղ դաւառէ և ի Նաբան գեղջէ
ի ՌՃՀԹ թվին եղև կաթողիկոս... Սա վախ-
ճանեցաւ՝ վարեալ ղկաթողիկոսութիւնն՝
ամս Դ»:

Ժամանակագրութեան ծախալը 11 էջ է:
Շարադրված է հարյուր քսան կաթողիկոս-
ների ժամանակագրութեանը՝ սխեմատիկ
ձևով:

Ձեռագիրն ընդօրինակել է Ղազար
քահանան նոր Ձուղայում 1696 թ.:

№ 1771 (է 1712) Համառոտ ժամանակա-
գրութիւն Փոքր Ասիայի պատմութեան
Անխորագիր:

Սկս. թ. 226 ա՝ «Ի թվին հայոց. Նկի.
դարթեալ տոտուածասաստ բարկութիւն. և
կլին ազգն թուրքաց ի վերայ քրիստոնէից
ի Վասպուրական...»:

Նմանվում է № 3078 ձեռագրի ժամանա-
կագրութեանը:

Վերջանում է. «ՌԾ. թվին. թալանեց
և կողոպտեց Լաւէնան զՍիս քաղաքն Կի-
լիկոյ: Ի ՌԾԱ թվին ղԹուխաթն քաղաքն
այրեցին» (թերթ 227 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Վարդան Լ-
րեցը 1651 թվ.:

№ 1786. ժամանակագրական սխեմա օս-
մանյան պատմութեան (սկսած սուլթան Օս-
ման Ղազիից, վերջացրած սուլթան Ահմե-
դով) «Սուլթան Ահմէտ իպնը Մըհամէտ
խան»: Այս սխեման կազմել է Ստեփաննոս
Դաշտեցին՝ Երեմիա Քեոմեքճյանի «Թագա-
ւորութիւն օսմանցոց համառոտիւ պատմու-
թեան» աշխատութեան հիման վրա: Ժա-
մանակագրական սխեմայի սկզբում, ձախ
լուսանցքում, կա այսպիսի մի հիշատակու-
թյուն «Այս գեղեցկացուցանողն Դաշտեցի

ամենահանձար պարոն Ստեփաննոսն է» (թերթ 36 բ), որից պարզում է, որ սխեմայի հեղինակը Ստեփաննոսն է։ Ինքը, Ստեփաննոսը, Երեմիա Քեոմերճյանի պատմության վերջում և իր սխեմայի սկզբում, թողել է հետևյալ հիշատակությունը. «Մինչև ցատտ Երեմիա Ձեղաղուն գրեալ և վճարեալ էր, թէպէտ և մեք ըստ կարոյն մերոյ զհեղեղացուցար զպարագրութիւնս և ըստ քերթողութեան տառից ևս զոյնն ինչ վայելչացուցաք որպէս և կարէք տեսանել ընդ հեղինակին զփորձառու» (թերթ 36 բ)։

Ժամանակագրական սխեմային նախորդում է հինգ տող տեղեկություն Ահմեդ սուլթանի մասին, որից հետո ընկել է երեք թերթ։

Սխեմայում, յուրաքանչյուր սուլթանի համար, տալում է թիւ նա քանիւրորդն է դաճում, ում տղան է, արվում է նրա ամենակարեւոր և բնորոշ գործերը, երբ է ծնւովել, երբ է դաճակալել, որքան է նրա դահակալության տարիները և որքան կյանք է ունեցել։

Սխեման վերջանում է սուլթան Ահմեդով՝ «Սուլթան Ահմեդ իւնը Մըհամէտ խան. 23 (այսինքն՝ 23-րդ — Ա. Ա.)» (թերթ 40 բ)։

Ձեռագիրն ընդօրինակել է Մարտիրոս Դի Առաքելը 1723 թ.։

№ 1786. Ոսանալոր Ժամանակագրութիւն Օսմանյան Պատմութեան։

Վերնագրված է՝ «Ոտիւ շարադրեալ անուանք թագաւորացն Օսմանցից»։ Հեղինակը հավանական է Ստեփաննոս Դաշտեցին է։ Ժամանակագրությունը բաղկացած է քսան երեք տներից։ Սկսվում է՝

«Նախնի եղեալ քաջն այն Օսման,
Այր կարովի և զինական.
Գրաւեաց երկիրս տեարս և իշխան,
աւար առեալ զգեօղս և զաւան...»

(թերթ 41 բ)։

Վերջացնում է Մուստաֆայով. երկու տող խոսում Ահմեդ սուլթանի մասին և թողնում թերթ։

«Որդի Մահմատի՝ Մուստաֆայն.
սուլթան եղեալ վայելչանման»

Սակա մուֆթոյն իւր օգնութեան
զնիւր դափառ թափառական։

Եզրայր սորա Ահմէտ սուլթան.

որ զթշնամիսն կորօրն կաղան։ (թերթ 42 ա)

Հավանական է ընդօրինակողին չի հաշտվել վերջացնելը

Ձեռագիրն ընդօրինակել է Մարտիրոս Դի Առաքելը 1723 թ.։

№ 1786. Ժամանակագրութիւն հնդկաց պատմութեան։

Վերնագրված է էջերի վերին լուսանցքում. «Թագաւորաց Հնդկաց. Կարգ քաղաւորաց Հնդկաց»։

Ժամանակագրությանը նախորդում է պատմական երկու փոքրիկ հատված, ուր արված է տեղեկություն հնդկաց Օմրանդիւր և Բահադուր թագավորների մահվան մասին. «Թվիս ՌՅԶ, փետրվար ԻԱ, փոքր թվիս ՂԱ, Նիհրան Ը աւուր ուրբաթու ինքնակալն Օմրանդիւր, թագաւորն հնդկաց վաղճանեցաւ»։

Թվիս ՌՃԿԱ, փետրվար ԺԸ փոքր թվիս ՂԶ նիհրան Ն յաւր Բշարաթու, որդի Օմրանդիւրի ինքնակալ թագաւորն Բահադուր շահ զվաղճանէաւ» (թերթ 42 ա)։

Ժամանակագրությունն սկսվում է 1719 թվից. «Թվիս փրկութեան մերոյ. ՌՉԺԹ. և փետրվար ԺԸ, թվիս հայոց ՌԿԸ և Աղաբիայի թվիս ՃԳ և ... աւուր շրեքշափթի, ընկեցին յաթոռոյն թագաւորն Ֆարուխ...» (թերթ 42 բ)։

Ժամանակագրությունը վերջանում է Մահմադ փաղիշահով. «14. Մահմադ շահ, փաղշահ, որդի Ջհանշին և թոռն շահ Ալամին նստաւ թախա 1719 և հայոց ՌՃԿԸ սեպտեմբեր ԺԹ, փոքր ՃԳ» (թերթ 43 ա)։

Ձեռագիրն ընդօրինակել է Մարտիրոս Դի Առաքելը 1723 թ.։

№ 1786. Ժամանակագրութիւն ընդհանուր պատմութեան։

Վերնագրված է. «Համառօտ վիպապատմութիւն յաղագս Ժամանակաց կենցաղոյ՝ ի յիսկզբանէ ասեղծման աշխարհի մինչև ցներկայական ամանակս մեր»։

Ժամանակագրությունն սկսվում է տրամադրված ձևով Ազատից: Սկզբնական ժամանակագրված է գլխավորապես Բարայելի և Հուդայի պատմությունը՝ մեջ ընդ մեջ բերվով հայոց պատմությունից որոշ փաստեր (Հայկի, Արամի, Տիգրանի և այլնի մասին): 8—9-րդ դարերից սկսած ժամանակագրության մեջ սկսում են մտնել ընդհանուր պատմության վերաբերվող ընդարձակ տեղեկություններ:

«801. Մեծն Կառլո եղև կայսր ի Հռոմայ:

964. Ազգն լինաց ընդ իւրեանց թագաւորին կղէն քրիստոնեայք:

968. Դադարեաց թագաւորութիւն Իտալիոյ:

975. Սկիզբն եղև թագաւորութեանն Մաւրից:

1013. Սարաճինացիք միանգամայն հաւածեալք եղէն Իտալիոյ ի ձեռն կայսեր...» (թերթ 81 ր):

Դեպքերը շարադրված են ժամանակագրական կարգով մինչև 1582 թ. («1582 լատինացիք զնոր տօմարն շինեցին» — թերթ 82 ա), որից հետո նորից վերադառնում է դեպի «երկրի ստեղծագործություն»-ը և ժամանակագրական նոր կարգով հասցնում մինչև 1577 թ.: Այստեղից կրկին անգամ վերադառնում է դեպի մեր թվագրության սկիզբը և սկսում շարադրել երկրի կարևոր «հրաշալիքներ»-ը («Են և այլ ինչք բազում դարմանալիք զորոց սակաւս շարադրեցից...» (թերթ 84 ա): Բերված այդ «հրաշալիք»-ները, պետք է ասել, մեծ մասամբ առասպելներ են, օրինակ՝ «595 ի Հռոմ եղև մահ. և ի յօդս երեկին մարդիկ սպառազինեալք, որք պատերազմէին ընդ միմիանս... 597 ի պաւստին Թօսկանայ, ի Իտալիայ, տեղեաց տրին, ի յերկնից ի միջօրէի...» (թերթ 85 ա):

Ժամանակագրության վերջում հիշում է հետևյալ փաստը. («1223 ի յերկիրն Թօսկանայ Գրանդուքի տեղեաց քար ի յերկնից. և շարժ մեծ և սպան 30000 զանձինս» — թերթ 85 ր):

Ժամանակագրությունը գրված է 1683

թ.: Ընդօրինակել է Մարտիրոս դի Առաքելը 1723 թ.:

№ 1786. Ժամանակագրություն պարսից պատմության:

Վերնագրված է «Կարգ թիւ թագաւորաց պարսից»: Հեղինակը, հավանական է, ձեռագրի գրիչը, Մարտիրոս դի Առաքելն է: Ժամանակագրությունն սկսվում է Սեֆուց. «Ի թուարեքութեանս հայոց ՊՊԶ, յորժամ Լանկ Թամուրն ել երկրէ իւրմէ և եկն երկիրս Ատրպատականի՝ զՎան, զԵրևան և զԵրեւան տեղեաց, էր տէր Արտաշէլոյ շին ոմն, անուն Սէֆի...» (թերթ 44 ր):

Պարսից շահերը, համարական կարգի մեջ առած, սկսում է Շահ Իսմայէլից. «Շահ Իսմայէլս նըստի թագաւոր Թարէզ ի թուին հայոց 28: Գնաց Ասպահան, պատերազմեցաւ ընդ Ալանգին...» ժամանակագիրը շահերի համարական կարգը հասցնում է մինչև շահ Սուլթանը, շահ Սուլեյմանի տղան, որն ըստ նրա թվահամարի, ինկորդն է շահ Իսմայէլից հետո: Ժամանակագիրն այնուհետև առանձին վերնագրերի տակ, որոնք գրված են տեքստի վերին լուսանցքում, տալիս է հետաքրքիր տեղեկություններ աղվանների արշավանքի մասին (այդ մասը վերնագրված է. «Առումն թագաւորութեան պարսից ի յաղվանէն» — թերթ 47 ր), Պետրոս Մեծի և Օսմանյան բանակի դեպի Պարսկաստան կողմակերպած արշավանքը (վերնագրված է. «Առումն աշխարհին պարսից, օսմանցոյ և ռուսաց» — թերթ 48 ա) և Օսմանյանների կռիվը աղվանների և պարսիկների հետ (վերնագրված է «Մարտ օսմանցոյ ընդ աղուանս և ընդ պարսից» — թերթ 49 ա):

Ժամանակագրությունը վերջանում է Թահմազդուլի խանի Պարսկաստան նվաճումով. «Ել Թահմազդուլի խանն զօրօք բազմօք և էառ՝ Համադան, Քրմանշայ, Հաւիդայ, Շուշտայ և յայն կոյս երկրացս պարսից՝ ի ձեռաց օսմանցոյ» (թերթ 49 ր):

Ժամանակագրությունն ընդօրինակված է 1723 թ.:

№ 1868 (է 1678) Համառոտ ժամանակագրություն հայոց պատմության Մովսեսի երդնկացու:

Վերնագրված է. «Վասն քաղաւորացն հայոց գոր կարգեաց Մովսես Խորենացին»:

Սկս. էջ 416՝ «Մովսէս Խորենացին գշարս թագաւորացն հայոց այսպէս կարգէ.

Յարէթ, որդի Նոյի. Գամեր. Թիրաս. Թորգոմ. Հայկն...»:

Վերջանում է՝ էջ 425 «...ի թիւս հայոց ՊԸ միահամուռ թագաւորք հայոց ՀԱ»:

Ընդօրինակիլ է Հովհաննէս արեղան 1585 թ. Սերաստիայում:

№ 1869 (է 1679) ժամանակագրություն հայոց պատմության Մովսեսի երդնկացու:

«Վասն թագաւորացն հայոց, զոր կարգեաց Մովսէս Խորենացին»:

Սկս. թերթ. 185 ա. «Մովսէս Խորենացին գշարս թագաւորացն հայոց այսպէս կարգէ. Յարէթ որդի Նոյի. Գամեր. Թիրաս. Թորգոմ. Հայկն...»:

Վերջանում է թերթ 188 ր «... և ի թիւ հայոց ՊԸ միահամուռ թագաւորք հայոց ՀԱ»:

Ձեռագիրն ընդօրինակիլ է Անդրեաս սարկավազը Եվդոկիայում 1585—1589 թվ. ընթացքում:

1869 (է 1679). ժամանակագրություն ընդհանուր պատմության՝ կազմված ոմն Անդրեաս սարկավազի կողմից: Սկսվում է Կոստանդնուպոլսի գրավումից. «Ի թվին 2 առաւ սուլթան Մուհամման գիւստամանդինուպուլիս, այսինքն գլխատմբօն, որ է Իսլամպուլիս» (թերթ 376):

Ժամանակագրության մեջ բացի քաղաքական փաստերից հիշատակված է երբեմն աշխարհի ժամանակագրական մանրունքներ, ինչպիսին «Ի թվին 292 խոճայ Միւրաքն գշարտախն շինեաց...» (թերթ 197ա):

Ժամանակագրությունը վերջանում է թերթ 401-ում «Թվին 217 տաճիկք տուն գիտֆան»:

Հետագայում երկու տարբեր գրիչներ, Կաֆայում, փոքրիկ լրացումներ են կատարել, հասցնելով մինչև 1688 թ. «Թվին

ՌՃԺէ յօգոստոսի է, օրն ուրբաթ, խիստ մեծ և ահագին շարժ եղև...» (թերթ 401 ր):

Ժամանակագրությունը Անդրեասինը լինելու վերաբերյալ ժամանակագրության մեջ հանդիպում ենք հետևյալ հիշատակությունը.

«Թվին Ռ և ԺԲ, փետրվարի Բ, սուրբ Սարգսին կիրակին, ևս, Անդրէասըս, կարգւեցա»: (թերթ 397 ր):

Ժամանակագրությունը բաղկացած է 12 էջից: Հիշատակված պատմական փաստերի մեծ մասն արժեքավոր է:

Ձեռագիրը գրել է ինքը Անդրեաս սարկավազը, Եվդոկիայում, 1585 թ.:

№ 1983 (է 1990) ժամանակագրություն ընդհանուր պատմության՝ Լյուդովիկոս Ալեքսանոսի:

Վերնագրված է «Հաւաւոր գիտութիւն ժամանակագրութեանն քս հոշակաւոր վիպասացն Ֆռանկացն և յունացն»:

Սկ. էջ 371 «Յամի կուսական ծննդեան 446 գորով կայսեր արեւելից փոքր Թէոդոսին և եպիսկոպոսի նոր Հոսմայ սուրբ Պրոկղին, մեծ եղև յԱսիայ շարժումն երկրի, որ բլոյց դյուով քաղաքս...»:

Վերջանում է էջ 399. «Ես Լուդովիկոս Ալեքսանոս անարժան եպիսկոպոս Բարելօնին, գրեցի և շարադրեցի ի Համատան, յամի տեան 1712, ի յունվարին 8՝ ըստ ուղիղ Տօմարին. վերջ»:

Ժամանակագրության ծավալը 28 էջ է, գրված է քաղկեդոնադավան անձնավորության կողմից: Բուն ժամանակագրությունն ընդգրկում է 171—189 էջերը, իսկ այնուհետև դավանաբանական վեճեր են հայոց եղեղեցու դեմ:

№ 2151 (է 2163) ժամանակագրություն Երզնկայի: Անխորազիր («Աշխարհի ստեղծագործությունից, մինչև 1474 թ.»):

Սկս. թերթ. 170 ա՝ «Ասաջին աստուածաստեղծ մարդն Ադամ յիւանելոյն ի դրախտէն եղև ամաց 2ԺԲ...»:

Վերջ. թերթ. 174 ա՝ «... ի 2ԻԶ. ել յեղնկան և խաբէութեամբ սպանաւ ի մայրքրոջէն, ի Սալշուկ Խաթունէն: 2Ի էր խիստ

կախարհ, ի ձեռն Պաշինաուրին մեռաւ և եղև սուտ շատոց և ամենայն ոչ զնա ողբաց:

Ձեռագիրն ընդօրինակել է Մարտիրոս երեցը Սերաստիայում 1587 թ.:

№ 2462 (Գ 1211) Ժամանակագրութիւն Արեւիկայաց քաղաքացիների:

Վերնագրված է. «Աս են թղաւորքն Արշապատնեաց՝ որ թաղաւորեցին ի վերայ հայոց՝ ա Նախ Արշակ մեծ արքայն պարսից՝ Պարթև թաղաւորէ ամս (թիւը բաց է թողված):»

Ի Վաղարշակ եղբայր Արշակայ թաղաւորէ հայոց՝ ամս. ԻԲ.

Կ Արշակ որդի Վաղարշայ թաղաւորէ ամս. ԺԳ.

Զ Արտաշէս թաղաւորեալ ամս. ԻԷ...»
Նման ձևով շարունակվում է մինչև Սուրբով. «ԻԴ. Սուրբով ի նոյն տոհմէ թաղաւորէ ամս. Է.

ԻԵ [Վ]առնապուհ թաղաւորէ ամս. ԻԱ.

ԻԶ Արտաշէս որդի նորայ թաղաւորէ ամս. Զ:

Եւ յայտնեալ բարձաւ թաղաւորութիւնն ի յերրորդ ամի Արտաշիսի ըստ բանին մեծին Ներսէսի և անկան ընդ իշխանութեամբն Պարսից» (թիւը 25 բ):

№ 2650 (Գ 854) Ժամանակագրութիւն հայոց պատմութեան, կազմված Մովսէս Երզնկացու կողմից:

Վերնագրված է «Վասն թաղաւորաց հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացի»:

Սկս. թիւը. 115 ա. «Արեթ որդի Նոյի. Գամեր. Թիրատ. Թորգոմ. Հայկն...»:

Վերջ. թիւը. 118 բ «... և ի թիւս հայոց ՊԸ. միահամուռ թաղաւորք հայոց ՀԱ.:

Ընդօրինակել է Հարություն անունով մեկը: Գրչությունը 18-րդ դարի է:

№ 2678 (Գ 95) Ժամանակագրութիւն հայոց պատմութեան՝ կազմված Մովսէս Երզնկացու կողմից:

Վերնագրված է «Վասն թաղաւորաց հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացի»:
Սկս. թիւը. 137. «Մովսէս Խորենացի

զարս թաղաւորացն հայոց աշտուէս կարգեաց:

Յարեթ, որդի Նոյի. Թիրատ...»

Վերջ. թիւը. 138 բ. «... Մեռանի Կոստանդին և թաղաւորէ միւս Կոստանդին յայլմէ ազգէ, որ աշտմ ունի զթաղաւորութիւնն և է թիւս հայոց ՊԵ.:

Ընդօրինակել է Մատթեոս զրիչը 1326 թ.

№ 2965 (Գ 98) Ժամանակագրութիւն Հայոց պատմութեան կազմված Մովսէս Երզնկացու կողմից:

Վերնագրված է «Վասն թաղաւորացն հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացի»:

Սկսվում է թիւը. 115 բ «Յարեթ որդի Նոյի. Գամեր.

Թիրատ...»

Վերջանում է՝ «... և ի թիւս հայոց ՊԸ. միահամուռ թաղաւորք հայոց ՀԱ.:

Ընդօրինակել է Մովսէս զրիչը 1687 թ.

№ 3072 (Գ 247) Ժամանակագրութիւն բնդհանուր պատմութեան:

Վերնագրված է «Պատմութիւն հայրապետաց քի որք քիւ են հոռմայեցոց, Երուսաղեմացոց և Աղեկաանդրացոց և Անիոնացոց և քաղաւորցն քի որքան են Հոռմայեցոց, Հրեից, Պարսից և Հայոց. և ի Քրիստոս սկսեալն. և կարողիկոսն Հայոց և զիայ քվականն միամիտեամուռ ի մի համարի բացայայտեալ. ոտուգեցաք. և գրեցաք անյապաղ»:

Նախ տալիս է Հոռմի, Երուսաղեմի, Աղեկաանդրիայի և Անիոնի հայրապետների ժամանակը, ապա առանձին ժողովների ու թաղավորների թվականը և կոնկրետ սկսում թվել հոռմեական թաղավորները՝ սկսելով Օգոստոսից. «Եւ այս են մի ըստ միջէ աշուանք թաղաւորացն և հայրապետացն և կաթողիկոսացն որ են նախ հոռմայեցոց թաղաւորն ծնընդեանն Քրիստոսի»:

«Նախ Աւգոստոս ամս ծղ Ա.

Տիրեբիոս ամս. ԻԳ. Բ» (294 ա)

Վերջ՝ «Կալուածան ամս ԺԳ 7.

Մանիլ ամս. ԽԳ:

Այժմ սկսուեց զհրէից քաղաւորքն շարադրել:

Նախ Հրովդէս՝ ամս. 1 է: Ա

Արքիդայոս՝ ամս. Թ: Բ...»

«Ահմատ ամս (թիվ չի գրված):

Ապու Արդիալայ ամս (թիվ չի գրված):

Մահմէտ ամս. լա»:

Սկ.՝ «Ամիր մուսնիք տանկաց:

ա Մահմէտ ամս. Ի:

բ Ապուսպարիբ ամս. Ը...»:

Վջ. «Ի Հարուն ամս. ԺԸ:

ԻԱ Զարբ ամս. 1»:

Սկ. ա «Այս հայոց քաղաւորքն են առաջին որ
է երրորդ մասն:

Նախ մեծն Արզար ամս. 1Ը:

բ Սանատրուկ ամս. 1...»:

Վջ. «Կոստանդին ամս. ԻԲ:

Դարձյալ Կոստանդին ամս. ԽԸ»:

Սկ. «Այս են կրդկսք հայոց:

Ա Նախ Կ'ն Դրեդոր ամս. 1:

Բ Արիստակէս ամս. 1...»:

Վջ. «... Տէր Պողոս ամս. Բ

տէր Կոստանդին ամս. Ժ»:

Շարունակվում է՝ «Այժմ տեսցուք դե-
պետերն մայրաքաղաքաց, որ բացայայտէ
դժիւ սոցայ, թէ որքան է և մեզ ուսու-
ցանէ:

Այս Հասնայն է»:

Սկսում է Պետրոս Առաքյալից և վերջացնում՝

«... Միգախադէս ամս. ԺԷ:

Միդուհառոս ամս. Ը»:

Շարունակվում է.

«Այս Անտիոքայն է.

Եւդիոս Ա.

Իգնատիոս Բ.

Կիւրկոս ԺԶ

Տիրան ԺԷ...»

«Այս Եռուսաղէմ այն է»:

Սկսում է Յակոբոսից վերջացնում՝

«... 1Ը Զարդաս

1Թ Հերմոն»:

«Այս աղեկասանգրացոցն է»

Սկսում է Մարկոս ափետարանից և վեր-
ջացնում՝

«... ԺԵ Արքիդայոս ամս. 1:

ԺԶ Աղէկասանգորոս ամս. ԺԷ»:

Վասն ժամանակաց գրոց ամացն յԱղամայ
որքան են քիւք և բանիք ի նահապետքն. և ի
յամայն նշանաւոր տեղիս միջև ի գալուստ
Նեոին:

— «ՅԱղամայ մինչև ի փոխին Ենովքայ
ամք Ռ. և ԴԺ. ԶԵ» (Տալիս է կարեւոր
փաստերը, գլխավորապէս կրոնական, լի-
զենդար, վերջում՝ կրոնական առանձին ժո-
ղովները):

Ընդօրինակել է Կարապետ գրիչը: Գրչու-
թյունը 16—17-րդ դարի է:

№ 3078 (Գ. 267) ժամանակագրություն բնդ-
հանուր պատմության: 1018—1602 թ. թ.)

Մնխորագիր: Սկս. Թ. 94 ր՝ «Ի թվին
հայոց Նկէ զարթեաւ աստուածասատ քար-
կութիւնն. և կին աղցն թուրքաց ի վերայ
քրիստոնէից ի վասպուրական...»:

Ժամանակագիրն իր աշխատութեան ա-
ռաջին մասում օգտվել է 14-րդ դարի «Ա-
նանուն ժամանակագրութիւն»-ից՝ հասց-
նելով մինչև 2Խ թվականը, իսկ այնուհետև
շարունակել մինչև 1201—1209 թվական-
ները, «ՌԾ թվին թալանեց և կողոպտեց
Լաւնտն, որ Սաթըրճի կոչիւր, զՍիս քա-
ղաք Կիլիկիայ ՌԾԱ թվին զԹուխաթ քա-
ղաքն յայրեցին» (թերթ 95 ր):

Վերջին մասում, հիմնականում, արվում
է թուրքական սուլթանների ժամանակա-
գրութիւնը՝ մեջ ընդ մեջ չիշելով տարե-
բային առանձին պատահարները (արեղակի
խաղաղութիւնները, առավոր ասպդերի երե-
վումները, անասունների հիվանդութիւնը
և այլն):

Զեռագիրն ընդօրինակել է Ալեքսան
գրիչը 1608 թ. Կարկառ քաղաքում:

№ 3072 (Գ. 247) ժամանակագրություն հա-
յոց պատմության, կազմված Մովսէս
Երզնկացու կողմից:

Վերնագրված է «Վասն քաղաւորացն
հայոց, զոր կարգեաց Մովսէս Խորենացին»:

Սկս. թ. 210 ր՝ «Մովսէս Խորենացին շարս թագաւորացն հայոց աշխատէս կարգէ.

Յարեղ որդի Նոյի՝	Ա.
Դամեր՝	Բ.
Թիրատ՝	Գ.
Թորգոմ՝	Դ.
Հայկն՝	Ե...»:

Վերջացնում է թ. 212 ր. «Խ. Խորենացի որդի Վաղարշու, որ է հայր մեծին Տրդատայ. և վրէժ պահանջէ դժանուանէն հօրն»։ Այնուհետև շարունակում է պարթևաց թագաւորների կարգը։ Վերջում կանգ է առնում Բագրատունյաց հայ թագաւորների վրա։ Վերջացնում է կիլիկյան Կոստանդին թագաւորով։ «Կոստանդին յայլմէ ազգէ. որ աշխատէն զթագաւորութիւնն մինչև ցայս վայրը. և թիւս հայոց ՊԼ. միահամուռ թագաւորք հայոց ՀԱ» (թ. 214 ր)։

№ 3527 (Գ. 704) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Վերնագրոված է. «ԽԼ. Վասն ամացն Աղամայ և նախահարցն և գօտանք ժողովոցն և սուրբ Լուսատորչին և թողանցն»։

Սկս. թ. 121 ր՝ «Աղամ եկաց ամս 21. և մեռաւ։ Սէթ 2ԺԲ, Ենովս՝ 2Ե։ Կայինան՝ 2Ժ։ Մաղաղիէլ՝ ՊԴԵ...»։

Վերջ. թ. 125 ր «... Եւ 2Խ (=1291) թվին Հայոց լրումն յունաց ի դառկէն, զորումնք ի Կիլիկիաց հետեւցան յունաց. և այս մինչև ցայս վայր»։

Ժամանակագրութեան ծափալը 9 էջ է։ «Պատմական առանձին արժեք չի ներկայացնում»։

Արժեքավոր է նույն ձեռագրի թերթի առաջին երեսի վրա երկարութեամբ կես էջ շարադրոված ժամանակագրութեանը. «Թվին ՆԾԲ վախճանեցաւ Գրիգոր Նարեկացին...»։

№ 3695 (Խ. 83) ժամանակագրութիւն պատմից պատմութեան։

Վերնագրոված է. «Ազգաբանութիւն պարսից թագաւորաց» (Արդավիլի Շահ Սաֆույ մինչև 1622 թ.)։

Սկս. թերթ 4 ա՝ «Սկիզբն շին Սաֆին է, որ էր իշխան Արտաշիւս. որոյ որդի է

շին Հայտար. առ էա իւր կին դրոյր Եսաղու թագաւորին Թարսիդու...»։

Վերջանում է 5 ր՝ «... ՌԿԷ. թվին Օսման նստաւ Դ. ամ թագաւորեաց։ ՌՀԱ. թիւն դարձեալ նոյն Մուստաֆայն նստաւ թագաւոր»։

Ընդօրինակված է 1667 թ.։

№ 3695 (Խ. 83) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Սկս. թերթ 6 ր՝ «Ի ՈՀ թուականին հայոց առաջին թաթարն երեկ աշխարհէն Բուլղարա էա դաշխարհս հայոց, որ Խուրազմ կոչիւր...»։

Վերջանում է թերթ 9 ր՝ «... թիւն ՌԿԵ էր։ Սալիլ փաշէն, որ սարտար երեկ Թարսիդ. թիւն ՌԿԷ էր։ ՌԿԸ. թիւն մորեխն եկն մինչ ի Դ տարին կերաւ»։

Գլխավորապէս պարսկական շահերի ժամանակագրութեանն է։

Ընդօրինակված է 1667 թ.։

№ 4998 (271) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Սկս. թերթ. 123 ր՝ «Յաղամայ ի երորդ Առնեւորդ (?) աստուածային պատմութիւնք ցուցանէին ի նմանէ եղեալ ազգ պարթևաց...»։

Վերջ. թերթ 126 ր «... Թիւն ՈՃԹ յուլիսի ԺԵ, օրն շարաթ, Թ սահաթին, բըրնկեցաւ Այազմա խափուն, ալրեցաւ մինչև բաղի ճաշք Լոտմբօլ բովանդակ շարսուն և անշարսուն դնգանին գունն...»։

№ 5882 (1277) ժամանակագրութիւն քնդհանուր պատմութեան։ Անխորագիր։

Սկս. թերթ 93 ա՝ «Եւ արդ ըստ ուխտադրութեան յառաջարանին և գնաթին արկցուք ձեռն ի դործ՝ գրել զորս ըստ ազգի և դորս փոխադրութեամբ և նոցանէ պարթևացն մինչև այսօրիմբք ժամանակացուք առ որ արար դերկոսին մի տէր մեր. և արդ ի Յաթեթէ սկսայց պատմաբանել։

Արեթ որդի Նոյի ծնաւ ըզԴամեր. Դամեր ծնաւ զԱքանազ. Աքանազ ծնաւ զԹիրատ...»։

Վերջ. 113 ր՝ «ՀԴ. տէր Կոստանդին Լամբ-

բօնեցին՝ ամս Դ, ՀԵ. տէր Յակոբ հոռմայեցոյ դաւանությամբ: ՀԶ. տէր Մխիթար ուղղադաւան: ՀԷ. տէր Մեսրոբ սրբութեամբ և ուղղափառութեամբ...»:

Ծափալը 38 էջ է: Ձեռագիրը 17—18-րդ դարի ընդօրինակութիւնն է:

№ 5619 (530) Ժամանակագրութիւնն քննահանուր պատմութիւն: Անխորագիր՝ Անեցու ժամանակագրութիւնից անմիջապէս հետո (այսինքն՝ 1178-ից հետո): Ճիշտ նրա «գալազան»-ների ձևով, անանուն մի ժամանակագիր, շարունակում է Անեցուն՝ սկսելով 1178 թ. խաչակրաց արշավանքից «ՈԻԸ. Շարժեցան Հոռմայեցիքն դալ ի փրկել զերուսաղէմ յանաւրինաց, և ի ճանապարհին կատօրեցին յիկոնիոն յալովս ի Հաքարացոյն եկեալս Սելևկիա, և թագաւորն նոցա լուսցեալ ի գեան Սելևկիոյ խեղդեցաւ» (թ. 108ր):

Վերջացնում է 1847 թվի սովոր «ԶԴԶ. ի սոյն ամ եղև սով յարևելք որ բազումք ի սովոյ մեռան» (թերթ 113 ր):

Ժամանակագրութեան ծափալը 10 էջ է: Հիշատակված փաստերն ընդհանուր առմամբ վստահելի են և հետաքրքիր: Որոշ փաստերի հիշատակութիւնն մտել է Անեցու հրատարակված ժամանակագրութեան շարունակութեան մեջ:

№ 5959 (1346) Ժամանակագրութիւնն Փոքր Ասիայի: Անխորագիր: Սկսվում է Ղարա Նազուց՝ «նախ Ղարայ Նազիչին բազումօք հեծելօք, որ ի հազար քառասուն և եօթն թուին ապստամբեցաւ ի թագաւորէն և եկեալ յՈւրհայ քաղաք եմուտ ի բերդն, և ամբացաւ...» (թերթ 95 ա): Ժամանակագիրը մանրամասն կանգ է առնում շահ Արքանի գաղթի ու նրան հետևող սովի վրա և շատ մասը գուցենքով նկարագրում տարածված մարդակերութիւնը. «Որպէս պատմէին մեզ՝ թէ յերկիրն Այրարաջու, ի գիւղն՝ որ կոչի Ուշական, այր Եւմն արարեալ էր վեհ ինչ տան իւրոյ թաքնաբար, որ գայր դարիպական, խաբեալ բերէր ի տուն իւր և սպանեալ պահէր ի վիհն յայն՝ և օր ըստ օրէ սակաւ ուտէր, զոր յետ խմացան բնակիչքն գեղջն»:

Ժամանակագրութիւնը վերջանում է ՈԿԷ (1618 թ.) («Ի սույն ամի (այսինքն՝ 1618 թ.) ընկեցին իշխանքն դաւլաւան Մուստաֆայն և թագաւորեցուցին...» (մընում է թերի):

Ժամանակագրութեան ծափալը 18 էջ է: Նյութը հետաքրքիր է:

№ 6691 Ժամանակագրութիւնն Հայոց պատմութիւն: Հավանական է Մանվել վարդապետի:

Ժամանակագրութիւնը դասավորված է հիշատակված անձնավորութիւնների անվան ալֆավիտով: Սկսում է՝

«Արգար հաւտաց ի Քրիստոս ի թուին Քրիստոսի 40:

Արքանամ կթ՝ զկս նստաւ, այն էր Բաղիշեցի. 1730:

Արքանամ Կրետացի առաջնորդ Թէքիրտաղու նստաւ կաթողիկոս: 1734:

ՎԶ. «Քիւլհանճը մարտիրոս վարդապետն պարիարդ եղև 1153 օգոստոսի 6:

Օշին յեաին նստի արքայ հայոց 1320 Քրիստոսի թուին»:

Ժամանակագրութեան սկզբում և վերջում, խառն ձևով, ավելացված է նաև զրջի կողմից իր ժամանակի առանձին պատրիարքների նշանակումները, վարդապետների մահը, ի միջի այլոց, կա հիշատակութիւնն նաև 1793 թվին ուսաց դեսպանի Պոլիս գալու մասին «ՌՄԽԲ. թուոջն հայոց և ի սեպտեմբերի Ա.-ին դեսպան Ռուսաց եմուտ ի յՍտամբոլ մեծաւ համարձակութեամբ և բազում զօրօք» (թ 1 ր):

«Ի ՌՄԽԲ թուին սոյն թագաւորս հանդերձ ծիրակուալւքն հրամայեաց ի Ղումդափու եկեղեցւոյ որմոցն կից շինել ժիկողմն ջրի խազնայ և միւս կողմն հովուդ հանդերձ վեց արշին պատերօք...» (1 ր):

Ձեռագիրն ընդօրինակված է 1799 թվին, հավանական է, Կ. Պոլսում:

№ 6354 Ժամանակագրութիւնն պարօից և հայոց պատմութիւն:

Վերնագրված է «Կարդ թագաւորաց աղպիս հայոց և պարօից՝ թէ ուստի սերեալ թագաւորեցին»:

Սկսում է Աղեքսանդրի նվաճումից և հասցնում ժինչև Օշինը (Ղևոնի որդի)՝ ապա լով հայ թագավորների և իշխանների համառոտ ժամանակագրությունը:

Թվին. Ջը.՝ Թէպորոս Ռշտունի՝ ամս. Ին: Եւ ալք. Լ. ասին:

Թվին. ՃԺԳ՝ Համադոպ՝ ամս է. Թվին ՃԻ. Գրիգոր Մամիկոնէն՝ ամս. Ժ...:

Վերջացնում է 1672 թվով «Եւ Քրիստոս է ժինչև ցառ մեզ են ամբ, ՌՌՀԲ. և հայոց. ՌՃԽԼ»:

Ձեռագիրն ընդօրինակված է 1672 թ.:

№ 7040 (Ս 175) Ժամանակագրություն Անդրկովկասի պատմության:

Վերնագրված է. «Թվակառն առ հասարակ մինչև առ մեզ»:

Ժամանակագիրը հայտնի չի: Սկսում է «Ջրհեղեղ»-ից (թերթ 287 ա), հիշում է հնագույն շրջանից ավանդական որոշ թվականներ և երբորդ էջում մանրամասը կանգ առնում պատմական կարևոր փաստերի վրա. «ՆՁԹ Սմբատ Մաքրիստոսն զԲզնային Դուհայ շինեաց: ԾՀԱ. Թվին թագաւորն Դաւիթ էառ Տփիսա: Ծհգ. Թվին թագաւորն Դաւիթ էառ զՅանի ի տաճկէն և մեռաւ. և թագաւորեաց որդի նորա Դիմեարէ...»:

Ժամանակագրությունը վերջանում է 1418 թ. «ԳԾԶ. Թվին էղալին մարա եկն զԱրճէշ շինեաց զգուժքէթն Ըռաղին: ՊԿԷ. Թվին Իսկանդ Միրզան թագաւորեաց» (թերթ 290 ա):

Ժամանակագրության ծավալը 7 էջ է: Վերջին մասում տրված փաստերը հետաքրքիր են և վստահելի:

№ 7117 Ժամանակագրություն հայ կաթողիկոսների:

Վերնագրված «Թիւք աւուրց կաթողիկոսաց»:

Ժամանակագրությունը գտնվում է Թովմա Մեծոփեցու պատվերով Հովհ. Արճիշեցու արտագրված ժողովածույում: Ի միջի այլոց, պիտի ասել, որ նույն ձեռագրում է գտնվում և աղվանից այբուբենը, որը հրատարակվեց պրոֆ. Շանիճեյի և զսցենա Արուստանյի կողմից:

Սկ. «Սուրբն Դրիգոր. Լ. ամ: Առիստակա. է: Վերանկա ժն»...»:

Վջ. «Յակոբ. զեղ մահու արքային սմա: (այնուհետև երկու և կես տող ջնջված է) Դրիգոր Խանձողասն և հրով (?) սպանին: Տէր Պողոս յԱյրարատյան Գաւառէ՝ զեղ մահու արքային: Կոստանդին Թ՝ նոյնպէս սմա զեղ կառն և սպանին: Գրիգոր. Գ՝ ի [ս]որա տուրքն աջն դարձաւ ի գաւառ իւր»:

№ 7617 (682) Տարեգրություն Վահան վարդ. Բաղսամյանի էջմիածնում տեղի ունեցած բաղադական անց ու դարձի:

Սկսվում է հեղինակի առաջարանով:

Վերջանում է էջ 621—629 «Մշակ» լրագրի Պետերբուրգի և Մոսկվայի քուրմերի դէմ ուղղած հարուածների առիթով՝ գլխով:

Մանրամասը տրված է իր ժամանակի կարևոր գեպքերը: Սկսում է Գեղարդ 4-րդ կաթողիկոսի անվանակոչությունից, մանրամասը կանգ է առնում իր կենսագրության վրա, այնուհետև տալիս է ծանոթ եպիսկոպոսների և վարդապետների բնութագիրը: Մի ամբողջ գլուխ նվիրում է Նազիր Շահի և մի շարք այլ բաղադական կարևոր անձնավորությունների էջմիածին դալուն և նրանց էջմիածնի նկատմամբ ունեցած վերաբերմունքին: Երեք գլուխներում մանրամասն խոսում է զպրոցների, հաակապես էջմիածնի ձեռարանի վրա: Մի գլուխ նվիրում է եկեղեցական կալվածներին, վերնագրելով «Եկեղեցապատկան կալուածների վերաբերմամբ»: Նա այստեղ հաղորդում է արժեքավոր փաստեր Անդրբլկովկասի անտեսական կյանքի, հատկապես էջմիածնի վանքապատկան կալվածների վերաբերյալ: Առաջին գլխում տալիս է արտասահմանում իր կատարած ճանապարհորդությունը:

Տարեգրությունը մեծ արժեք է ներկայացնում նոր շրջանի պատմության համար:

№ 7841 (1076) Ժամանակագրություն ընդհանուր պատմության:

Անխորադիր փոքրիկ ժամանակագրություն՝ կազմված ոմն Հակոբի կողմից: Սկսում է Սամսոն քաղաքի 1420 թ. հրդեհից. «Յամի տեառն ՌՆԻ ի Սամսոն քաղաք, որ է մերձ ծովին Պոնդոսի, կրակ անկաւ և

գրադաքն առնասարակ այրեաց ծայրէ ի ծայր...» (թերթ 316ր, 2-րդ սյունյակ):

Վերջացնում է 1635 թվականի մի քանի գեպքերի մանրամասը նկարագրությամբ. «Այսմ ամի Խոնդքարն երեկ երևան, էառ, Մուսթուզայ փաշէն եթող բերդումն, ինքն գնաց Թարվէզ, անդի դարձաւ իւր աշխարհն: Այսմ ամի Լէհաց թագաւորն դեպառ առաքեաց մօտ շահ Սաֆին. շահ Սաֆին պարոն տէր Օգոստիանոս արքեպիսկոպոսն առաքեաց լէհաց աշխարհն մօտ թագաւորն Եմտանիսլաւ, զիս, Յակոբս, Յիսուսի ընթերեաց վերայ խնամօղ կարգիս միաբանողաց և աջորդ ժողովրդեանն: Այս ամի Մուսթուզա փաշէն գերացուց զաւառս ԳՃԻ գերի, Ապարաներոյ գնաց, և զամենայն սպանածն, տարածն օլքէս դուրս ելաւ Ռեճ ջան. դարձեալ այս ամի շահ Սաֆին երեկ գնաց բերդին վրայ, Գ ամիս նստաւ, մարտի ժե օրն երկէ ելաւ բերդին վրայ, Սիրհաճին առին, մարտի ԻԲ բերդն առին: Մուսթուզա փաշէն մեռաւ: Շխիջան փաշէն Մէիմուն փաշէն և այլ բազում փաշտէնք և զէրմի բռնեց ողորկեց Ղահղան զալէն, Մուրատ բէկն, Թահմազ Ղուլի խանն, որ բերդն աւելին, դօնմիշ ելան, հետ խոնթաբին գնացին. շահն երբ յետ դարձաւ, օլքէս գնաց ի զանկատ Մախսուտ սուլթանին, մինչև Արտաւէլ այն տեղն սուլթանութիւնն կարեցին, սուլթանութիւն տվին իւր տղին Իմամ զուլի բէկին» (թերթ 318ր, 2-րդ սյունյակ):

Ժամանակագրության ծավալը չորս էջ է: Հաղորդած տեղեկությունները վստահելի են և հետաքրքիր:

№ 7993 (822) Ժամանակագրության բյուզանդական կայսրների Արեակունյաց և Բագրատունիների:

Վերնագրված է Վայսերբ Հռոմայեցուց և գործք նոցա:

Սկսվում է Գայոսից. «Գայոս, որ կոչեցաւ Յուլիոս՝ ամս. Դ...» (թերթ 193 ա):

Այդ կարգով ժամանակագիրը տալիս է նրանց կարևոր գործերի մասին համառոտ տեղեկություններ, հասցնում է մինչև հիսուն յոթերորդ կայսրը—Հուստինիանոս. «Յուստինիանոս, որդի երրորդ Կոստանդինի՝ ամս. Բ. ի սորա առաջին ամին տիրեցին Հիւսիսային ազգն Խաղիբք՝ հայոց, վրաց և ադուանից ի ՃԼԴ թուին» (թերթ 201):

Թերթ 200 ա շարունակվում է «Թագաւորք Պարթևաց, որք կոչին Արշակունիք» գլխով: Սկսում է հայոց Հրաչե թագավորից. «Յետ մահուանն Շամիրամայ անցեալ բազում ժամանակաց՝ տիրէր հայոց Հրաչի...» (թերթ 200 ա): Թերթ 202 ք սկսվում է «Պատմութիւն Բագրատունեաց («Աշոտ որդի Սմբատայ, որ Ապլարան կոչեցաւ թագաւորէ հայոց...»):

Ժամանակագրությունը վերջանում է Դադիկի որդի Հովհաննիսով. «Եւ Դադիկ հասեալ ի ժամ ծերության, արտասուօք և ողորմությամբ և անդադար աղօթիւք վախճանեցաւ. և թագաւորեաց Յովհաննէս որդի նորա յԱնի...» (թերթ 206 ա):

Ժամանակագրության ծավալը 12 էջ է: Պատմական մեծ արժեք չի ներկայացնում, օգտված է զանազան հայ և թուրքմանական պատմագրերից:

№ 8233 (971) Ժամանակագրության հայոց պատմության: Անխորադիր:

Սկսվում է էջ 119 ա-ից. «Թվին ՌՃԳ արեգակն խաւարեցաւ...»:

Վերջանում է էջ 123 «Ի ՌՃԴ թվին ապրիլի և Դափանցի Զաքարիայ վարդապետի աշակերտ Մինաս վարդապետն ի սուրբ էջմիածին կախկոպոս օրհնեցաւ նոր կիրակին ի Ղազարու կաթողիկոսէն Ճահկեցոյ»:

Մեծ արժեք չի ներկայացնում. կան միայն մի քանի փաստեր, որոնք հետաքրքիր են: Հեղինակը հավանական է Դավիթ վարդապետն է:

